

«Միփթար Սերաստացի» կրթահամալիր
Մայրենի լեզու, 4-րդ դասարան

Տարբերակ 2-րդ

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

Փոքրիկ իշխանը (հատված)

Մեծահասակները թվեր շատ են սիրում: Երբ նրանց պատմում ես, որ դու նոր բարեկամ ես ձեռք բերել, նրանք երբեք չեն հարցնում ամենագլխավորի մասին: Երբեք նրանք չեն ասի. «Իսկ ինչպիսի՞ ձայն ունի նա: Ինչպիսի՞ խաղեր է սիրում խաղալ: Թիթեռներ բռնո՞ւմ է, թե՞ ոչ»: Նրանք հարցնում են. «Քանի՞ տարեկան է նա: Քանի՞ եղ*այր ունի: Քաշն ինչքա՞ն է: Ինչքա՞ն է վաստակում նրա հայրը»: Եվ դրանից հետո երևակայում են, թե ճանաչեցին մարդուն: Երբ մեծահասակներին ասում ես՝ «Ես տեսա վարդագույն աղյուսից մի տուն, որի պատուհանին խորդենի կար, իսկ **կտուրին՝** աղավնիներ», նրանք երբեք չեն պատկերացնի այդ տունը: Նրանց պետք է ասել. «Ես տեսա մի տուն, որ արժե հար*ուր հազար ֆրանկ»: Եվ միայն այդ ժամանակ նրանք կբացականչեն. «Ինչպիսի՞ գեղեցկություն»:

Ճիշտ այդպես, եթե նրանց ասես. «Ահա ձեզ ապացույցներ, որ, իրոք, Փոքրիկ իշխանը եղել է, որ նա շատ, շատ լավն էր, ծիծաղում էր և շատ էր ուզում գառնուկ ունենալ. իսկ ով ուզում է գառնուկ ունենալ, նա անպայման գոյություն է ունեցել»: Եթե այսպես ասես, նրանք միայն ուսերը կթոթվեն ու ձեզ կնայեն այնպես, ինչպես կնայեին մի անգետ **մանկիկի**: Բայց եթե նրանց ասես՝ «Նա թռել էկել էր մի մոլորակից, որը կոչվում է N° 612», դա նրանց կհամոզի, և նրանք քեզ այլևս չեն ձանձրացնի հարցերով: Ի՛նչ կարող ես անել, այդպես են մեծահասակները: Չարժե նրանցից նեղանալ: Երեխաները մեծահասակների նկատմամբ պետք է ներողամիտ լինեն:

Բայց մենք **հասկանալ**, թե ինչ բան է կյանքը, և ինչ խոսք, ծիծաղում ենք համարների ու թվերի վրա: Ես այս պատմվա*քը սիրով մի կախարդական հեք*աթի նման կպատմեի: Ես կուզենայի սկսել այսպես.

«Կար-չկար մի **գեղեցիկ** իշխան կար: Նա ապրում էր մի մոլորակի վրա, որը իրենից մի քիչ էր մեծ, և նա սրտակից բարեկամ չուներ...»: Նրանք, ովքեր **ճանաչել** կյանքը, կզգային, որ սա զուտ ճշմարտություն է:

Ես ամենևին էլ չեմ ուզում որ իմ գիրքը կարդան միայն զվարճության համար: Իմ սիրտը ցավից ճմլվում է, երբ ես **հիշել** իմ փոքրիկ բարեկամին, և ինձ համար հեշտ չէ նրա մասին պատմելը: Արդեն վեց տարի է անցել այն օրից, ինչ նա և իր գառնուկը հեռացել են ինձանից: Ես նրա մասին **ուզում եմ** պատմել, որպեսզի չմոռանամ նրան: Շատ տխուր բան է, երբ բարեկամներին մոռանում են: Բոլորը չէ, որ բարեկամ ունեն: Եվ ես **վախենալ**, թե կդառնամ մեծահասակների նման, իսկ նրանք թվերից բացի ոչնչով չեն հետաքրքրվում:

1. Տեքստի բառերից 4-ում բաց թողած տառի փոխարեն * (աստղանիշ) է դրված: Գրի՛ր այդ բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը: (4միավոր)

2. Ի՞նչ է նշանակում տեքստում հանդիպող **երևակայել** բառը: Ճիշտ պատասխանն ընդգծի՛ր: (1միավոր)

ա) պատկերացնել

բ) շինել

գ) պատրաստել

դ) կառուցել

3. Տեքստում **թավ և շեղ գրված** բառերի հոմանիշները (ինաստով մոտ) բառերը գրի՛ր: (2միավոր)

4. Տրված բառերից որի՞ դիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության: Սխալ տարբերակն ընդգծի՛ր: (1միավոր)

ա) սիրտ - պարզ

բ) բարեկամ - բարդ

գ) գեղեցկություն - պարզ

դ) անգետ - ածանցավոր

5. Տեքստում հանդիպող հետևյալ բառերից ո՞րն է գործածված եզակի թվով: Ճիշտ տարբերակն ընդգծի՛ր: (1միավոր)

ա) խաղեր

բ) պատուհաններ

գ) թվեր

դ) իշխան

6. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված: Սխալ տարբերակը ընդգծի՛ր: (1միավոր)

ա) գեղեցիկ - ածական

բ) տխուր - գոյական

գ) գառնուկ - գոյական

դ) մոլորակ - գոյական

7. **Կապույտ** նշված բայերն անհրաժեշտ ձևով համապատասխանեցրո՛ւ տեքստին: (2 միավոր)

8. Տրված նախադասության մեջ գտիր՝ ո՞վ կամ ի՞նչը ի՞նչ էր անում (ենթական և ստորոգյալը): Այդ բառերը **մանուշակագույն** դարձրո՛ւ: (1միավոր)

Իշխանիկը ապրում էր մի փոքրիկ մոլորակի վրա:

9. Տեքստից դո՛ւրս գրիր մեկ հարցական նախադասություն: (1միավոր)

10. Տեքստում ընդգծված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան: Դի՛ր բաց թողած կետադրական նշանը: (1միավոր)

11. Պատասխանի՛ր՝ ի՞նչ են շատ սիրում մեծահասակները: (1միավոր)

12. Պատասխանի՛ր՝ ի՞նչ էին հարցնում մեծահասակները նոր բարեկամի մասին:
(1միավոր)

13. Ինչո՞ւ Փոքրիկ իշխանի մասին պատմելը հեշտ չէր: Ճիշտ պատասխանն ընդգծի՛ր.
(1միավոր)

- ա) հեղինակը մանրամասները չէր հիշում
- բ) արդեն վեց տարի էր անցել, ինչ նա և գառնուկը հեռացել էին
- գ) բարեկամներին շուտ էին մոռանում
- դ) հեղինակի սիրտը ճկվում էր:

14. Ինչո՞ւ էր հեղինակը վախենում մեծահասակների նման դառնալուց: Ճիշտ պատասխանն ընդգծի՛ր: (1միավոր)

- ա) Ճիշտ հարցեր էին տալիս
- բ) ծիծաղում էին համարների և թվերի վրա
- գ) մեծահասակները թվերից բացի ոչնչով չէին հետաքրքրվում
- դ) մեծահասակները շատ բարեկամներ ունեին:

15. Տեքստում **մոխրագույն** ներկի՛ր այն հատվածը, որտեղ գրված է, որ երեխաները պետք է հասկանան և ներեն մեծերին: (1միավոր)